

ՀԱՍԼԵՏ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Քաղաքացիական հասարակության և իրավական պետության միջև փոխհարաբերությունների նկատմամբ հետաքրքրությունը տարեց տարի աճում է. գլոբալիզացման և ռեգիոնալիզացման գործընթացները հետազոտողների առջև դնում են նոր խնդիրներ, կապված քաղաքացիական հասարակության և իրավական պետության պատկերացումների, դրանց փոխկապվածության, փոխազդեցության բնույթի հետ: Հարցի ուսումնասիրության համար ելակետային կանխադրույթ է ծառայում այն, որ դրանք (նաև՝ մինչիրավական պետությունը և ավանդական հասարակությունը) հավասարազոր, փոխկապված, փոխազդող սոցիալ-իրավական երևույթներ են, և առանց մեկի՝ մյուսի գոյությունը պարզապես անհնարին է: Ավելին, այս երկու երևույթների միջև պատմական հակադրությունը մղվում է հետին պլան, և առանցքային է մնում հասարակություն և պետություն համագործակցությունը:

Միաժամանակ, պետք է փաստել, որ վերջին տասնամյակներում, հատկապես արդյունաբերական զարգացած երկրներում, այս սոցիալական երևույթների միջև հարաբերությունները ըստ իրենց բնույթի՝ դարձել են առավել հանդուրժողական և երկկողմանի շահագրգիռ, քանի որ հասարակության և պետության փոխադարձ կախվածությունը ընդգծված ուժեղացել է: Դրա հետ մեկտեղ, ակնհայտ է, որ արդի ժամանակներին բնորոշ գլոբալիզացման և ռեգիոնալիզացման գործընթացները 20-րդ դարում ձևավորված ազատական պետությունների և քաղաքացիական հասարակությունների հիմքերի վրա թողնում են խարխլող հետևանքներ:

Նկատենք, որ ինքնուրույն և ինքնաբավ պետությունները՝ իրենց հանրություններով հանդերձ, փոխադարձ հարաբերությունները կառուցում են՝ ելնելով ներքին շահերից ու պահանջներից՝ հենվելով ազգային, պատմական սովորույթների ու ավանդույթների վրա: Մնացած այլ երկրները իրենց հարաբերությունների բնույթը պայմանավորում են արտաքին ազդեցության ներքո: Պետությունը լինելով ստորադասված՝ հասարակությանը իր զարգացման մակարդակով համապատասխանում է իրեն ստեղծողին՝ հասարակությանը:

Եթե պետության կողմից հասարակության վրա ազդեցություն գործադրելու գործիքները կարևորագույնը իրավաստեղծ-իրավակիրառ գործառնությունն է, ապա հասարակության համար դրանք եղել և մնում են հասարակական կարծիքը, դիմում - բողոքները, առաջարկներով իշխանություններին դիմելը, հավաքներ, խաղաղ ցույցեր, երթեր, ժողովներ, գործադուլներ՝ կազմակերպելը և այլն, որոնց նպատակը մեկն է՝ ապահովել այս երկու համեմատաբար ինքնուրույն կազմավորումների միջև ինստիտուցիոնալ-գործառնական հավասարակշռությունը:

*Հիմնարարներ՝ իրավական պետություն, քաղաքացիական հասարակություն, մինչիրավական պետություն, ավանդական հասարակություն:*

Չնայած այն բանին, որ «քաղաքացիական հասարակությունը» և «իրավական պետությունը» պատմականորեն երկար ժամանակ գտնվում են հետազոտողների տեսադաշտում, այնուամենայնիվ դրանց նկատմամբ հետաքրքրությունը տարեց տարի աճում է. գրվում և տպագրվում են գիտական հոդվածներ, մենագրություններ, ատենախոսություններ: Բանն այն է, որ ժամանակակից աշխարհում գոյություն ունեցող իրադրությունը, պայմանավորված գլոբալիզացման և ռեգիոնալիզացման գործընթացներով, հետազոտողների առջև դնում է նոր խնդիրներ՝ կապված քաղաքացիական հասարակության և իրավական պետության պատկերացումների, դրանց փոխկապվածության, փոխազդեցության բնույթի հետ:

Ինչ վերաբերում է հայրենական պետական-իրավական գիտական մտքին, ապա այն, չգիտես ինչու, առավել ակտիվ է պետության և իրավունքի տեսության հիմնախնդիրների, քան քաղաքացիա-

կան հասարակության տեսական վերլուծությունների նկատմամբ: Մինչդեռ դրանք (նաև՝ մինչիրավական պետությունը և ավանդական հասարակությունը) հվասարազոր, փոխկապված, փոխազդող սոցիալ-իրավական երևույթներ են, և առանց մեկի՝ մյուսի գոյությունը պարզապես անհնարին է այն պարզ տրամաբանությամբ, որ պետությունը ծնվում է հասարակությունից, գործառնում է հասարակության տարաբնույթ խնդիրներ լուծելու համար և զարգացման որոշակի փուլում ( արդի ժամանակներում) այս երկու ֆենոմենները ձեռք են բերում նոր որակներ՝ բնութագրվում են որպես «քաղաքացիական հասարակություն» և «իրավական պետություն»:

Այժմ, ինչպես նշում են ռուսական դպրոցի ներկայացուցիչները, «քաղաքացիական հասարակություն և պետություն փոխհարաբերությունները՝ կենտրոնական խնդիրներից մեկն է: Պատմականորեն և տրամաբանորեն արդարացված հա-

www.journal.lawinstitute.am

կադրությունը՝ պետության կողմից քաղաքացիական հասարակության չեզոքացումը, կամ պետության չեզոքացումը հասարակության կողմից (Վ. Մարքս) մղվում են հետին պլան: Կենտրոնում մնում է քաղաքացիական հասարակություն և պետություն համագործակցությունը», որի լույսի ներքո դեռևս շատ հարցեր մնում են չլուծված:

Դրանցից կարևորները, անառարկելիորեն, եղել և մնում են պետության և հասարակության փոխհարաբերությունների բնույթին վերաբերող հարցերը, և, մասնավորապես, քննվող երևույթների ինքնավարության աստիճանը և սահմանները:

Մեծ հաշվով, իրավաբանական, քաղաքագիտական սոցիոլոգիական մտքի համար մնում է անառարկելի և անվիճելի այն դրույթը, որ Հին և Միջնադարի ժամանակներում հասարակության և պետության միջև չի եղել հստակ տարանջատում, քանի որ «ինքը հասարակությունը տարալուծվում էր պետական-իրավական կանոնակարգումների մեջ» և նշանակալից չափով կլանվում պետության կողմից<sup>2</sup>:

Դրա հետ մեկտեղ, վիճելի է մնում այն տեսակետը, որ արդի ժամանակների գիտական միտքը հասարակության և պետության միջև հարցը ըստ էության լուծել է, և քաղաքացիական հասարակության տեսությունը՝ լինելով տարածված ամենուր, արագացված տեմպերով կյանքի է կոչվում: Հասկանալի է, որ նախևառաջ խոսք կարող է գնալ այնպիսի երկրների փորձի մասին, որտեղ զարգացած է արդյունաբերությունը և քաղաքացիական հասարակության ազդեցությունը կարելի է գտնել կյանքի ամենատարբեր ոլորտներում՝ տնտեսական, քաղաքական, ընտանիքի և պետության, ոչ պետական ինստիտուտների համակարգում և այլն:

Այս տեսակետի վիճելիությունը առաջնահերթ պայմանավորված է նրանով, որ քաղաքացիական հասարակության հատկորոշման հարցում առ այսօր չկա պարզություն. լինելով իրավաբանական, քաղաքագիտական, փելիսոփայական, սոցիոլոգիական գիտությունների քննարկման առարկա, այն ստացել է ամենատարբեր սահմանումները: Եվ քանի որ քաղաքացիական հասարակությունը հանդիսանում է «հասարակություն-պետություն» հարաբերությունների կողմերից մեկը, ապա, բնականաբար, քաղաքացիական հասարակության հասկացության անհստակությունը անմիջականորեն տրանսֆորմացվում է նրանց միջև հարաբերությունների անհստակություն: Դրանում համոզվելու համար, մասնավորապես, մեջ բերենք Ն. Վ. Անդրիանովին, որը ոչ առանց հիմքերի նշում է, որ «մասնավոր շահերի ոլորտի ինստիտուտիլիզացման ընթացքը երբեք չի կարող ավարտվել, քանի որ նոր շահերը ծնում են նոր սոցիալական նույնակա-

նություններ, և դա է պատճառը, որ քաղաքացիական հասարակության ձևավորման ավարտի, հատուության, զարգացման մասին հարցերը միշտ կկրեն վիճելի բնույթ»:

Հարցի բարդությունը պայմանավորված է նաև նրանով, որ քաղաքացիական հասարակության հասկացությունը երբեք կայուն չի եղել, այլ հասարակության և պետության հետ միասին միշտ փոփոխվել և որոշակիորեն կատարելագործվել է: Համապատասխանաբար՝ այս բացառիկ երևույթների աստիճանական զարգացմանը զուգընթաց փոփոխվել և կատարելագործվել են ոչ միայն դրանց փոխհարաբերությունների ձևերը, այլ բնույթը, առարկան ու բովանդակությունը: Մարդկային քաղաքակրթության զարգացման յուրաքանչյուր փուլում գոյություն ունեցած պետական-իրավական և հասարակական երևույթների հիման վրա, ինչպես այդ շրջանում ձևավորված պետության և քաղաքացիական հասարակության, այնպես էլ դրանց միջև փոխհարաբերությունների սահմանումների վերաբերյալ, մարդիկ ունեցել են իրենց յուրովի պատկերացումները: Այլ կերպ՝ մարդկային գոյության պատմության ամբողջ ընթացքում պետության և քաղաքացիական հասարակության միջև հարաբերություններում երբեք չի եղել հստակ ամրագրված սահմանագիծ, դրանք փոփոխվել են՝ պատմական և սոցիալական գործոններով պայմանավորված (այլ ոչ թե բնական)՝ մասնավոր և հանրային հարաբերությունների ոլորտներում փոփոխություններին համահունչ:

Մի դեպքում՝ պետությունը վերանայելով մասնավոր և հանրային ոլորտների միջև սահմանները հոգուտ իրեն, ընդարձակում է իր ազդեցությունը քաղաքացիական հասարակության նկատմամբ, մյուս դեպքում «մասնավոր» հասկացությունը այնպես է ձևախեղում, որ հնարավորություն է ստեղծվում օրինական հիմքերով միջամտել մարդկանց, և վերջիններիս կողմից ստեղծված ինստիտուտների միջև հարաբերություններին, որը մինչ այդ նրա համար անհասանելի էր:

Պետության և քաղաքացիական հասարակության, իսկ դրա հետ մեկտեղ նաև դրանց փոխհարաբերությունների վերաբերյալ տեսակետների աստիճանական զարգացումը առավել ցայտուն նկատելի է Արևմտյան Եվրոպայի երկրներում, և հատկապես՝ Մեծ Բրիտանիայում:

Այս երկրում 18-րդ և մեծ չափով 19-րդ դարում ազատական գաղափարների հիման վրա ձևավորվեց այսպես կոչված ազատական պետություն և դրան համահունչ՝ քաղաքացիական հասարակություն<sup>4</sup>: Այս ժամանակահատվածի Բրիտանիան բնութագրվում է որպես ազրարային և վաղ արդյունաբերական կապիտալիստական, և դրա հետ մեկ-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տեղ՝ երկիր, որը արագ տեմպերով փոխակերպվեց առաջատար մանուֆակտուրային և կոմերցիոն երկրի, որտեղ պետության, քաղաքացիական հասարակության և անհատի միջև հարաբերությունները կառուցվում էին այսպես կոչված *սոցիալական պայմանագրի* հիման վրա<sup>5</sup>, համաձայն որի՝ անհատը և քաղաքացիական հասարակությունը գործում էին բացառապես մասնավոր շահերի և սեփականատիրության հարաբերությունների, իսկ պետությունը՝ հանրային ոլորտում: Պետությունը պարտավորվում էր պաշտպանել անհատի իրավունքները և շահերը, որոնք հայտարարվում էին բնական: Օրինակ՝ աշխատուժ գնելու և վաճառելու, մասնավոր սեփականությունը տիրապետելու և տնօրինելու, այլոց իրավունքները չխախտելու պայմանով ամբողջ ծավալով ազատ գործելու, պետության՝ մասնավոր կյանքին չմիջամտելու, բնակարանի անձեռնմխելիության իրավունքը և այլն: Ընդ որում, պետությունը մի կողմից այնքան ուժեղ էր և ունակ, որ կարողանում էր հավուր պատշաճի պաշտպանել մարդկանց կյանքն ու սեփականությունը, երկիրը՝ արտաքին վտանգներից, և մյուս կողմից՝ այնքան թույլ էր և «փոքր», որ չէր կարողանում միջամտել մասնավոր շահերի, սեփականության և անձնական կյանքի ոլորտներին: Հատկապես դա վերաբերում էր տնտեսությանը, որտեղ ամեն ինչ որոշվում էր տնտեսական գործունեության ազատականությունը:

Սակայն անգլիական պետության դասական ազատական մտայնությունը ուներ մեկ կարևոր նշանակալից թերություն՝ այն ժողովրդավարական չէր (արգելվում էր կանանց մասնակցությունը ընտրություններին, արհմիությունները ամեն կերպ արհամարվում ու ճնշվում էին) և դա էր պատճառը, որ շարքային քաղաքացիների մեծամասնությունը և բանվոր դասակարգը սկսեցին պահանջել պետությունից նաև քաղաքական և սոցիալական իրավունքներ: Վեջիններիս կողմից իրականացված ճնշումների արդյունքում պետությունը ոչ միայն նկատելիորեն արդիականացվեց և լրացվեց նոր ժողովրդավարական բովանդակությամբ և «դասական ազատականից» պետությունը վերափոխվեց «ազատական-ժողովրդավարականի»՝ «սոցիալական պետության հիմնարար սկզբունքների» պահպանմամբ, այլ նաև էականորեն վերափոխվեց հասարակությունը՝ ծայրահեղ անհատապաշտությունը փոխարինվեց «արդյունավետ» կոլեկտիվիզմով<sup>6</sup>:

Բնականաբար, այսպիսի շրջադարձը պետական-իրավական և հասարակական կյանքում չէր կարող համապատասխանաբար չազդել նոր ձևավորված ազատական-ժողովրդավարական պետության վրա, որը հանդես էր գալիս որպես

«համընդհանուր բարօրության պետություն», իսկ 20-րդ դարի 80-ական թթ.՝ որպես «նորագատական պետություն», մի կողմից, և նոր, արդիականացված քաղաքացիական հասարակության վրա՝ մյուս կողմից: Այս երկու սոցիալական երևույթների միջև հարաբերությունները դարձան առավել հանդուրժողական և երկկողմանի շահագրգիռ՝ ըստ իրենց բնույթի, քանի որ հասարակության և պետության փոխադարձ կախվածությունը ընդգծված ուժեղացել էր:

Իհարկե, Մեծ Բրիտանիան գոյություն ունեցող երկրների շարքում բացառություն չէր, մնանօրինակ զարգացումներ տեղի ունեցան նաև արդյունաբերորեն զարգացած այլ պետություններում, և այժմ դրանց շարժընթացը ոչ թե դանդաղում է, այլ հակառակը՝ ուժեղանում է, ինչը պայմանավորված է ժամանակակից աշխարհում գոյություն ունեցող մի շարք հանգամանքներով, բայց նախևառաջ՝ 20-րդ դարում ձևավորված ազատական պետությունների և քաղաքացիական հասարակությունների հիմքերը խարխալող գլոբալիզացման և ռեգիոնալիզացման գործընթացներով:

Հավելենք, որ հարցի համատեքստում յուրաքանչյուր երկիր ունի իր յուրովի ճանապարհը, պայմանավորված իր պատմական, ազգային և այլ նմանօրինակ գործոններով և, իհարկե, այն դերակատարումով և տեղով, որը, արդի աշխարհում ունի տվյալ երկրի ազգային պետությունը և քաղաքացիական հասարակությունը:

Նկատենք, որ ինքնուրույն և ինքնաբավ պետությունները՝ իրենց հանրություններով հանդերձ, ինչպես նաև ազգային միախմբությունները իրենց փոխհարաբերությունները կառուցում են՝ ելնելով ներքին շահերից ու պահանջներից՝ հենվելով ազգային, պատմական սովորույթների ու ավանդույթների վրա: Մնացած այլ երկրներում (զարգացող երկրներ, «բաց հասարակություններ», «երիտասարդ ժողովրդավարություններ») այս ինստիտուտների հարաբերությունների բնույթը ձևավորվում է արտաքին ազդեցության ներքո: Սակայն, բոլոր ազգային պետությունների և քաղաքացիական հասարակությունների փոխհարաբերությունները, անկախ դրանց յուրահատկություններից, գտնվելու վայրից, ինչպես վկայում է ընդհանրացված փորձը, կենսագործվում են ընդհանուր սկզբունքների և օրինաչափությունների շրջանակներում: Պետությունը լինելով ստորադասված հասարակությանը (երկրորդական), վերջինիս նկատմամբ դրսևորվելով քաղաքական-իրավական ձևերով, իր զարգացման մակարդակով համապատասխանում է իրեն ստեղծողին՝ հասարակությանը: Ընդ որում, հասարակությունների բնույթի փոփոխության, զարգացման գործընթացների և պետությունների աստիճան-

նական զարգացման կամ հեղափոխական փոփոխությունների միջև առկա է անմիջական կապ: Վերջապես, ժամանակակից պետություններն ու հասարակական կազմավորումները, որոնք անվանվում են քաղաքացիական հասարակություններ և իրավական պետություններ, չափից ավելի իդեալականացված են, քան կան իրականում, ավելի շուտ դրանք ինչ-որ չափով վիրտուալ են:

Տարբեր երկրների պետական-իրավական և հասարակական համակարգերի գործառնությունների պատմական փորձը ամենայն համոզվածությամբ վկայում է, որ իրավական, ինչպես նաև ոչ իրավական պետությունը, որպես հարաբերականորեն անկախ ինստիտուտ, իր տրամադրության տակ ունենալով հսկայածավալ նյութական, կազմակերպական, ուժային և այլ ներուժ, մշտական ազդեցություն ունի հասարակության վրա: Իհարկե, հասարակությունն էլ ձեռնպահ չէ պետության նկատմամբ: Հարցի վերաբերյալ Մ. Բայմախանովը նշում է, որ իրավական պետության և քաղաքացիական հասարակության միջև գոյություն ունի «փոխկապվածության և փոխալայմանավորվածության երկկողմանի կապ. իրականում նրանցից ոչ մեկը չի կարող գոյություն ունենալ առանց մյուսի: Նրանց գործառնությունները խստագույնս միահյուսված են և ազդեցություն ունեն յուրաքանչյուրի վրա»<sup>7</sup>:

«Մարդկային հանրության այս երկու գլխավոր ինստիտուտների»<sup>8</sup> փոխշահավետ համագործակցությունը, ինչպես ցույց է տալիս փորձը, անհրաժեշտություն է: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ մի կողմից, իրավական պետության նկատմամբ քաղաքացիական հասարակության առաջնայնությունը հարաբերական է, և, մյուս կողմից, նրանք չպետք է հակադրվեն, քանզի, ինչպես արդարացիորեն նշում է Ա. Վասիլևսկայան, «օբյեկտիվորեն դատապարտված են» մշտական փոխգոծակցության<sup>9</sup>:

Եթե իրավական պետության ազդեցության ուղղությունները և ձևերը քաղաքացիական հասարակության վրա հիմնականում պարզ են և հասկանալի (ներքին և արտաքին գործոններով պայմանավորված՝ տարաբնույթ մեթոդների՝ խթանիչ, թույլատրման, պաշտպանիչ, արգելման կիրառմամբ իրավակարգավորիչ-կազմակերպչական գործունեություն հասարակական կյանքի՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական, հոգևոր և այլ ոլորտներում), ապա տեսական և գործնական տեսանկյունից կարևոր է պարզել, թե ինչ ճանապարհներով ու ձևերով է քաղաքացիական հասարակությունը ազդեցություն գործադրում իրավական պետության վրա:

Հարցի քննական վերլուծության համար

կարևոր է այն ելակետային դրույթը, համաձայն որի՝ պետության արձատները սկիզբ են առել հասարակությունից. հասարակությունն է ծնել և ուժ տվել պետությանը, այլ ոչ թե հակառակը: Առանց հասարակության՝ պետությունը որպես այդպիսին, երբեք չէր կարող կայանալ: Դրանում համոզվելու համար բավարար է, մասնավորապես, ուշադրություն դարձնել այն բանի վրա, որ պետության և իրավունքի առաջացման տեսությունում, անկախ դրա ուղղությունից՝ պայմանագրային, բնական-իրավական, հոգեբանական, դասակարգային, օրգանական, բռնության և այլն, առաջնային, ելակետային կանխադրույթ է դիտարկվում հասարակությունը և անհատը: Եվ այս իրողությունը, համաձայն էլեմենտար տրամաբանության և ողջամտության, պետք է և կարող է հիմք հանդիսանալ հասարակության համար՝ ըստ ժամանակի և տարածության ամենատարբեր ուղղություններով բազմաբնույթ ազդեցություն գործել պետության վրա, որի համար հասարակությունը ի բնե և նշանակությամբ օժտված է անհրաժեշտ ինքնաբավությամբ : Հասարակության տրամադրության տակ գտնվող կարևոր գործիքներից մեկը, որի օգնությամբ ազդեցություն է զարմադրվում պետության վրա՝ հասարակական կարծիքն է, որը ձևավորվում է հանրաքվեների, համազգային ընտրությունների, ժողովների, ամենատարբեր մակարդակներում իրականացվող սոցիոլոգիական հարցումների ժամանակ, որին նպաստում են հեռուստատեսությունը, ռադիոն, տպագիր խոսքը, էլեկտրոնային կապի միջոցները և այլն: Այստեղ քաղաքացիական հասարակությունը, ի տարբերություն ավանդական հասարակության, առավել ազդեցիկ է ինչպես ամբողջ պետության, այնպես էլ նրա քաղաքատարրերի նկատմամբ: Խոհեմ և հեռատես քաղաքական ուժը, հաշվի նստելով հասարակական կարծիքի հետ, հատկապես՝ ներպետական կյանքում, այնպես կձառայի ու կիրականացնի իր կառավարչական գործառնությունները, որ հասարակությանը հեռու պահի սոցիալական և քաղաքական ցնցումներից, հասարակական հարաբերություններին հաղորդի հաստատունություն և ներդաշնակություն:

Քննարկվող գործիքների շարքին են դասվում նաև դարերի ընթացքում փորձարկված և շատ երկրներում սահմանադրորեն ամրագրված՝ առանձին քաղաքացիների, մեկուսախմբերի, միավորումների՝ դիմում - բողոքներով, առաջարկներով իշխանություններին դիմելու, հավաքներ, խաղաղ ցույցեր, երթեր, ժողովներ, գործադուլներ կազմակերպելու իրավունքը և այլն, որոնց նպատակը մեկն է՝ ապահովել այս երկու համեմատաբար ինքնուրույն կազմավորումների միջև ինստիտուցիոնալ-գործառնական հավասարակշռությունը: Հա-

կառակ դեպքում, երբ, օրինակ, քաղաքացիական հասարակության ազդեցության թուլացման, պետության կոնսերվատիզմի, իշխանության ղեկին մինևույն անձանց երկարաժամկետ գտնվելու առաջանցիկ զարգացումներից հասարակության հետ մնալու պատճառով պետությունը աստիճանաբար օտարվում է հասարակության մեծամասնությունից (շահերը ներկայացնելուց և պաշտպանելուց), խախտվում է այդ հավասարակշռությունը

և աստիճանական առաջընթացը: Այսպիսի իրավիճակը, ինչպես ցույց է տալիս պատմական փորձը, անխուսփելիորեն բերում է եթե ոչ արմատական բարեփոխումների, ապա հեղափոխությունների և պետական հեղաշրջումների (օրինակ՝ հետխորհրդային պետություններ, Եգիպտոս, Լիվան և այլն):

<sup>1</sup> Տե՛ս, Энциклопедия государственного управления в России./ под. общ. ред. В. Егорова/ отв. ред. И. Н. Барциц. М., 2004. Т. 1. С. 251.

<sup>2</sup> Տե՛ս, Кельзен Г. Чистое учение о праве//История политических и правовых учений. Хрестоматия/под. ред. О. Э. Лайста. М., 2000. С. 380-382.

<sup>3</sup> Տե՛ս, Андрианов Н. Б. Гражданское общество как среда институционализации адвокатуры: автореф. дис...канд. юрид. наук. СПб., 2006. С. 15.

<sup>4</sup> Տե՛ս, Nairn T. The Brek-Up of Britain. L., 1977, Poggi G. The Development of the Modern State. L., 1988, etc.

<sup>5</sup> Տե՛ս, Melennan G., Held D., Hall St. ( eds). The idea of Modern State. Philadelphia. 1984. P. 10.

<sup>6</sup> Տե՛ս, Melennan G., Held D., Hall St. ( eds). The idea of Modern State. Philadelphia. 1984. P. 10-14.

<sup>7</sup> Տե՛ս, Баймаханов М. Т. Избранные труды по теории государства и права. Алматы. 2003. С. 331.

<sup>8</sup> Տե՛ս, Худоренко Е. А. Гражданское общество и государство: вместе или порознь?//Национальные интересы. 2009. N 2 /16/. С. 17.

<sup>9</sup> Տե՛ս, Василевская А. И. Демократия и гражданское общество (правовые аспекты) //Современная Россия: власть, общество, политическая наука. М., 1998. Т. 2-й. С. 18.

<sup>10</sup> Տե՛ս, Дюркгейм Э. Социология. Ее предмет, метод, предназначение. М., 1995. С. 337-339.

Гамлет Степанян  
Адвокат

## РЕЗЮМЕ

### *Теоретические и методологические проблемы взаимоотношений правового государства и гражданского общества*

Интерес относительно взаимоотношений между гражданским обществом и правовым государством из года в год растет: процесс глобализации и регионализации ставит все новые задачи перед исследователями, связанные с природой их взаимодействий и взаимосвязей. Для изучения вопроса отправным постулатом служит то, что они также как и доправовое государство и традиционное общество, как социально-правовые явления взаимосвязаны и взаимозависимы, без одного существование другого просто невозможно. Более того, существовавшее между этими явлениями историческое противоборство уходит в прошлое, и актуальным остается их взаимодействие.

Одновременно, необходимо отметить, что за последние десятилетия, особенно в промышленно развитых странах, отношения между этими социальными явлениями стали более толерантными и по своей природе двухсторонне заинтересованными, поскольку обоюдная зависимость государства и общества заметно усилилась. Вместе с тем очевидно, что характерные для современности глобализация и регионализация оставляют разрушающие последствия на основы либерального государства и гражданского общества.

Отметим, что самостоятельные и самодостаточные государства и их сообщества свои отношения строят исходя из своих внутренних интересов и потребностей, а в остальных государствах характер этих взаимоотношений определяется под влиянием извне. Государство, будучи вторичным по отношению к обществу, уровнем своего развития соответствует своему создателю - обществу.

Если среди инструментариев, с помощью которых государство воздействует на общество, главным является

законотворчество и правоприменительная функция, то для общества таковыми были и остаются общественное мнение (референдум, всенародные выборы и др.), обращенные к властям заявления, жалобы, индивидуальные и коллективные петиции, мирные демонстрации, митинги, забастовки и др., целью которых является одно – обеспечить институционально-функциональное равновесие между этими относительно самостоятельными образованиями.

*Ключевые слова:* Правовое государство, гражданское общество, доправовое государство, традиционное общество.

Hamlet Stepanyan  
lawyer

#### SUMMARY

##### *Theoretical and methodological problems of relationships between constitutional state and civil society.*

Interest to the relationship between civil society and legal state is growing yearly: the processes of globalization and regionalization pose new, related to the nature of these interactions and relationships, challenges to the researchers. The starting postulate to study this question is that these relationships and interactions, same as traditional society and pre-law state, are interdependent and interrelated – there is no one without another. Moreover, these phenomena the existing historical antagonism between these notions is becoming outdated, while their interaction is gaining more and more relevance.

At the same time, it should be noted, that over the past decades, especially in industrialized countries, the relationship between these social phenomena have become more tolerant and are inherently two-way concerned as the mutual dependence between the state and society has increased significantly. However, it is obvious that peculiar to modern world globalization and regionalization are harmfully effecting the foundations of liberal state and civil society that were formed in the 20th century.

Furthermore, independent and self-sufficient states and their communities build their relations based on their domestic interests and needs, and in other countries, the nature of these relationships is determined by the external influence. The state, being secondary to society, on the level of development corresponds to its creator, which is the society.

While among the toolkits with which the state influences the society, the dominant are the law-making and law-enforcement functions, such toolkits for society have always been the public opinion (referendum, popular elections, etc.), addressed to the authorities applications, complaints, individual and collective petitions, peaceful demonstrations, meetings, strikes, etc., the purpose of which has been providing institutional and functional balance between the relatively autonomous entities.

*Keywords:* Legal state, civil society, pre-legal state, traditional society.